

1182



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«04» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 014 - 25

Նախաձեռնող՝

**«Մաունթին Քրնսթրաքշն» ՍՊԸ**  
Ք. Երևան, Քանաքեռ Ձեյթուն, Թբիլիսյան խճուղի, 3/19

Գործունեությունը՝

Եղեգնուրի ԱԿԽ-ի հանքավայրի Հարավ-Արևելյան  
տեղամասի օգտակար հանածոյի  
արդյունահանման նպատակով երկրաբանական  
ուսումնասիրություն  
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 014 - 25

« 04 » փետրվարի 2025թ.

**Եղեգնուտի ԱԿԽ-ի հանքավայրի Հարավ-Արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝ «ՄԱՌԻՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության տեսակը՝ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Եղեգնուտ բնակավայր

**Ներածական մաս.** Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-Արևելյան տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական տարածքում՝ Եղեգնուտ բնակավայրի ամենամոտ բնակելի տնից 0.5 կմ հեռավորության վրա: Հայցվող տեղամասի հարավային եզրագիծը համընկնում է թոչնաբուծական տնտեսության տարածքի հետ:

Հայցվող տարածքը ներառում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի՝ ջրային, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ու գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասեր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվում է 43.0 հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Տեղամասի ավազակոպճային կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական աղացի և լճի արտադրության համար:





Հայցվող տարածքի կոորդինատներն ըստ ArmWGS-84 համակարգի ներկայացված են ստորև.

1. 4438838.0228, 8426675.8016
2. 4439022.2272, 8426945.9281
3. 4438843.9988, 8427322.3059
4. 4438679.2089, 8427377.9311
5. 4438556.5538, 8427546.0300
6. 4438539.6074, 8427662.9502
7. 4438588.6406, 8427931.7546
8. 4438789.5997, 8428054.1105
9. 4438741.4514, 8428268.0937
10. 4438459.0426, 8428122.9995
11. 4438245.9853, 8427865.0729
12. 4438484.1700, 8427861.0945
13. 4438502.0942, 8427184.3641
14. 4438214.4654, 8427187.5682
15. 4438207.1200, 8427121.5160
16. 4438165.6531, 8427116.0969
17. 4438155.1667, 8427187.4030
18. 4438013.6109, 8427187.6994
19. 4438004.6771, 8427435.0428
20. 4437914.5127, 8427415.9983
21. 4437986.7811, 8427082.1606
22. 4438422.1933, 8427092.8290
23. 4438597.9958, 8427033.6740
24. 4438697.0898, 8426931.8583
25. 4438723.8306, 8426823.5758
26. 4438838.0228, 8426675.8016

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանութային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ CAT մակնիշի էքսկավատորով V կարգի ամրության ապարներում:

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 8 մ խորությամբ 42 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքն ընդունվում է 2.0 մx2.0 մ: Հետախուզական հորերի միջև հեռավորությունը նախատեսվում է 50-270 մ:

Հետախուզահորերի անցման ժամանակ կառաջանա 1344 մ<sup>3</sup> լեռնային զանգված, այդ թվում՝ 1293.6 մ<sup>3</sup> այլովիալ-դեյլովիալ առաջացումներ, 50.4 մ<sup>3</sup> հողաբուսական շերտ: Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվելու են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ, առանձին-առանձին և աշխատանքների ավարտից անմիջապես հետո ամրոցությամբ օգտագործվելու են խախտված տարածքների վերականգնման համար: Աշխատանքները





կատարվելու են մեխանիզացված եղանակով՝ հորերի անցման համար օգտագործվող էքսկավատորի կիրառմամբ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 336 գծ.մ:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ, 40x40 սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ օգտակար կուտակի ամբողջ հզորությամբ: Կախված ավազակոպճային կուտակի հզորությունից՝ ակոսների երկարությունը կարող է տատանվել մինչև 8 մ:

Նմուշարկման ակոսից վերցված ամբողջ նյութը կրճատման եղանակով հասցվելու է 15 կգ-ի, լցվելու է առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու և ուղարկվելու է լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար: Նախատեսվում է վերցնել 42 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Ակոսային նմուշներից կազմվելու է 2 տեխնոլոգիական նմուշ, որի հիման վրա կուսումնասիրվեն օգտակար կուտակից տարանջատված կոպճի և դրա ջարդման արդյունքում ստացված խճի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Լաբորատոր փորձարկումների ուղարկվող նմուշների ընդհանուր ծավալը կկազմի մոտ 0.04 մ<sup>3</sup>:

Նախատեսվում է իրականացնել նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիզիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային ճանապարհները:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերի խանութներից շշալցված տարբերակով և տեղափոխվելու է տեղամասի տարածք աշխատանքները սպասարկող մեքենայով, իսկ կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով:

Նմուշարկման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 1293.56 մ<sup>3</sup> ծավալով ավազակոպճային զանգվածի հետլիցք, (լաբորատոր փորձարկումների է ուղարկվելու 0.04 մ<sup>3</sup> ծավալով լեռնային զանգված), որի վրա փովելու է 50.4 մ<sup>3</sup> ծավալով հողաբուսական շերտ: Կատարվելու է ռեկուլտիվացիա: Աշխատանքները կկատարվեն մեխանիզացված եղանակով: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմելու է 168 մ<sup>2</sup>: Իրականացվելու է նաև վերականգնված տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիա սերմերի ցանքի միջոցով:

Ընդամենը ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է մասնահանել 195.6 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հայտում եղած տեղեկատվության հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել: Տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները**





- Մեքենաների հիմնական լիցքավորումը, սպասարկումը կատարվելու է համապատասխան ծառայություն մատուցող մասնագիտական սպասարկման կայաններում:

-Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա տեղադրվելու են արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրեր:

-Նախատեսվում է փոշենստեցման նպատակով աշխատանքների տեղամասին մոտեցնող ճանապարհի ջրցան:

- Տեխնիկական նպատակներով ջրառ իրականացնելու համար նախատեսվում է դիմել շրջակա միջավայրի նախարարություն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

-Տեղամասի տարածքի և Արաքսի հնահունի գրունտային ջրերի նավթամթերքներով աղտոտումը կանխելու նպատակով հաստվածքի մակերևույթին հետախուզահորերի անցման ժամանակ օգտագործվող էքսկավատորի շարժման ուղեծրով կտեղադրվեն երկաթբետոնե տիպային սալիկներ:

-Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում են հատուկ միջոցառումներ:

Տեղամասում ԽՍՀՄ տարիներին անցած, ներկայումս չգործող, մասամբ քանդված, փլուզված, հողային զանգվածով և աղբով լցված առուների վրա ազդեցությունը բացառելու նպատակով հետախուզական առուների անցումն իրականացվելու է դրանցից առնվազն 2 մ հեռավորության վրա:

Աշխատանքների ընթացքում «ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- 1.մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- 2.նավթամթերքներով տեղամասի տարածքի աղտոտվածության մշտադիտարկում՝ ամսական մեկ անգամ,
3. աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ,
4. Հարավ-արևելյան տեղամասի և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով,
- 5.Արաքսի հնահունի տարածքի գրունտային ջրերի քանակական և որակական մշտադիտարկում՝ տարեկան չորս անգամ:

Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 530.0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի(ՀՕ-110-Ն) համաձայն: Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կառնորսեր ներքին





գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել Եղեգնուտ բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Բացառել երկրաբանական հետախուզական փորվածքների տեղադրումը ջրային հողերի տարածքում:

- Պաշարների հաշվարկման ընթացքում բացառել ջրային հողերի ներառումը հաստատվող պաշարների եզրագծում:

### ԵՃՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Եղեգնուտի ԱԿԻՍ-ի հանքավայրի Հարավ-Արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով



Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան